...(Աշտարակ քաղաքի Օ...
տարակի ընտրական օկրուգ),

(Արմենպրես)

ԼՂԻՄ. ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ինքնավար մարզը շարունակում է շրջափակման մեջ գտնվել: Ահա արդեն մի քանի օր է, ինչ Ստեփանակերտի երկաթուղային կայարանում ոչ մի ժողովրդատնտեսական բեռ չի ստացվում: Լեռնային Ղարաբաղի համար նախատեսված արդյունաբերական և շինարարական նյութերով, սննդամթերքներով, վառելիքով լցված մոտավորապես հա- [illegible] կանգնած է մնացել հանրապետության երկաթուղիներում: Ծայրաստիճան բարդացել է նյութական արտադրության օբյեկտների, տրանսպորտի, ագրարային համալիրի ձեռնարկությունների աշխատանքը: Հերթեր խանութներում, համակցված կերի բացակայություն ֆերմաներում, աստիճանաբար ամայացող շինհրապարակներ՝ ահա Արցախի այսօրվա ամենևին ոչ լրիվ պատկերը:

Այս դժվարին ժամանակներում մարզի հատուկ կառավարման կոմիտեի, ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի, կուսակցական և տնտեսական մարմինների ջանքերը ամբողջովին նպատակամղված են ռեգիոնում լարվածության թուլացմանը, լեռնային երկրամասի քաղաքների և գյուղերի կենսագործունեության պահպանմանը: Այսպես, անցած կիրակի ռազմական ուղղաթիռներով մարզային կենտրոն բերվեց մոտավորապես 50 տոննա ալյուր: ԼՂԻՄ-ի ճանապարհներով սկսել են երթևեկել ավտոշարասյուները ԽՍՀՄ զինված ուժերի ստորաբաժանումների ուղեկցությամբ:

Ցավոք, դեռ չի հաջողվում լրիվ կասեցնել անպատասխանատու անձանց հակաիրավական գործողությունները, որոնք խորացնում են երկրամասի առանց այն էլ պայթյունավտանգ իրադրությունը: Պետք է նշել, որ բնակչությունը նախանձելի տոկունություն ու սառնասրտություն է հանդես բերում, ընդհանուր առմամբ չենթարկվելով հնարավոր ամեն տեսակ պրովոկացիաների:

Ղարաբաղցիները, որոնք հեռուստատեսությամբ հետևում էին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի վերջին նստաշրջանի աշխատանքի ընթացքին, խիստ զայրացած են հռետորների մեծ մասի անպատասխանատու հայտարարություններից, որոնցում ուղղակի վիրավորանք է հասցվում հայ ժողովրդին, նրա մտածելակերպին ու իղձերին, ինչպես նաև անսքող հարձակումներ են արվում ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի, նրա նախագահ Ա. Ի. Վոլսկու գործունեության հասցեին: Դրա հետ մեկտեղ մարդիկ ըմբռնումով վերաբերվեցին նստաշրջանում առանձին հռետորների բռնած դիրքին, որոնք ձգտում էին մասնավորապես մեղմել Ադրբեջանի մըտավորականության և ժողովրդական ճակատի որոշ ներկայացուցիչների ելույթների ագրեսիվ տոնայնությունը: Վաղուց արդեն պետք է գիտակցել, որ առաջադրված նպատակին հասնելու ուժային մեթոդները ձախողման են դատապարտված: Ղարաբաղի պրոբլեմը պետք է լուծվի միայն փոխըմբռնման և սահմանադրական փոխզիջումների միջոցով: Սա է ժամանակի հրամայական պահանջը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ